ՀՏԴ 398 (479.243) *Գրականություն*

Ա. Մ. Աթայան , բ.գ.թ., պրոֆեսոր
Արցախի պետական համալսարան
Armeno 1972 @ list. ru

ԱՐՑԱԽԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Արցախի ճակատագիրը ժողովրդական բանահյուսության մեջ» հոդվածում բացահայտվում է այն հանգամանքը, որ Արցախի բանահյուսությունը հայ ժողովրդի արժանապատիվ կեցվածքի, ազատասիրական ձգտումների արտահայտություն է: Հենվելով հիմնականում Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի» բանահյուսության հինգ գրքերում զետեղված նյութերի վրա, շեշտվում է այն հանգամանքը, որ դարեր շարունակ հայ ժողովրդի թշնամիները ոտնահարել են նրա ապրելու իրավունքը, բայց որքան բարբարոս է եղել թշնամին, այնքան դիմադրող ու անսասան է եղել արցախցին: Բանահյուսական բազմաթիվ ժանրեր խոսում են արցախցու ճակատագրի մասին:

Բանալի բառեր՝ ճակատագիր, բանահյուսություն, նշխարներ, բարբարոս թշնամի, բռունցքվել, օջախ, հոգևոր կորուստներ, ազատասիրական ձգտումներ:

А.Атаян

СУДЬБА АРЦАХА В НАРОДНОМ ФОЛЬКЛОРЕ

В статье « Судьба Арцаха в народном фольклоре..» раскрывается тот факт, что фольклор Арцаха является выражением свободолюбия армянского народа. Опираясь в основном на материалы пяти книг Л. Арутюняна « Реликвии Арцахского фольклора..» отмечается тот факт, что на протяжении веков враги армянского народа, попирали его право на существование, хотя насколько жестоким был враг, настолько арцахец был непоколебимым и противостоял ему. Различные жанры фольклора Арцаха говорят о судьбе арцахца.

Ключевые слова: судьба, фольклор, реликвия, варвар, обьединившиеся в действиях, очаг, духовные потери, свободолюбие.

A.Atayan

THE FATE OF ARTSAKH IN THE NATIONAL FOLKLORE

In the article “The Fate of Artsakh in the National Folklore” the author discusses the fact that the folklore of Artsakh is a noble expression of the state of the Armenian people and their freedom-loving claims. Basing particularly on the material from the five books of L. Harutyunyan “The Relics of the Armenian Folklore” it is mentioned in the article that throughout many centuries the enemies of the Armenian people wanted to deprive them of the right for life. However the people of Artsakh could always struggle and face the aggression of the barbaric enemy. The different genres of Artsakh folklore speaks of the fate of Artsakh Armenians.

Key words: fate, folklore, barbaric enemy, struggle, unification, hearth, spiritual losses, freedom-love, claim.

Հայ ժողովրդի կյանքը պատմական ճակատագրի բերումով անցել է արյունահեղ պատերազմների, թշնամական բազում ընդհարումների մեջ:

Դարեր շարունակ հայ ժողովրդի թշնամիները ոտնահարել են նրա ապրելու իրավունքը, ոչնչացրել մշակույթը, Հայաստանը դարձրել պատերազմների թատերաբեմ: Հայոց ճակատագրից անմասն չի մնացել նաև նրա շենշող անկյուններից մեկը՝ գեղահմա Արցախը, որը քաղցր ու անուշ պատառ է եղել թշնամիների համար:

Որքան բարբարոս է եղել թշնամին, այնքան դիմադրող ու անսասան է եղել արցախցին, պահպանել է իր տաճարները, վանքերը, խաչքարերը, հոգևոր հարստությունը: Բանահյուսական տարբեր ժանրերում նա կերտել է թշնամու նենգ ու դավադիր կերպարը: Վիպական հյուսվածքներում, ժողովրդական երգերում, անգամ առած-ասացվածքներում, անեծքներում,

նզովքներում պահպանվել են մեր պապերի վերաբերմունքն ու ըմբռնումները թշնամու կերպարային նկարագրի հանդեպ: Արցախյան բանահյուսության մեջ կողք-կողքի են դրվում, հակադրվում հայն ու թշնամին, ինչպես չարն ու բարին, լույսն ու մութը, մարդկայինն ու տմարդին: Թշնամու ներքին էության մեջ շեշտվում է նրա բռնակալական, աշխարհակործան բնույթը: Նրան խորթ է ստեղծագործ ու խաղաղ աշխատանքը, ավարառու է, խաբեբա ու նենգ: Կողոպուտով ու գերեվարությամբ տարված՝ դավադիր է ու խարդախ:

Արցախցին թշնամու մեջ տեսնում է իր դավանած բարոյական ու հասարակական սկզբունքներին խորթ և հակադիր տեսակետների կրողին: Դարերի պատմություն ունեցող արցախյան բանահյուսությունը ներկայացնում է երկրամասում ապրող բնիկ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակը անհիշելի ժամանակներից առ այսօր, նրա անկախության երազանքը, միասնության տենչը, ազատ ապրելու ձգտումը:

Իր հարազատ հողի վրա ժողովուրդն ապրել է բովանդակալից կյանքով: Անգամ օտարներն են միշտ հիացել ու զարմացել նրա շենշող ապրելակերպով: Նա ոշինչ չի ակնկալել հարևաններից, փորձել է լուսավոր շողեր ձգել իրենց հարաբերություններում: Սակայն բոլոր հարևանները չէ, որ հարգել են նրա ապրելու իրավունքը: Եվ սրբազան հողի վրա ավելացել են գերեզմանադաշտերը, ճյուղակոտոր ու բզկտված ճակատագիր է բաժին ընկել հային, սակայն հավատարիմ է մնացել պապենական խորհուրդներին.

Ժառանգ թողե,
Կամար կապե,
Մին կյիր կյիրի,
Մին ծառ տնգե,
Հավատդ էլ դայիմ փռնե:[1]

Արցախյան բանահյուսությունը հայ ժողովրդի արժանապատիվ կեցվածքի, ազատասիրական ձգտումների արտահայտությունն է: Սրբություն է հողը արցախցու համար: Շատ է կորցրել, բայց երբեք էլ չի հաշտվել կորցրածի հետ: Կորցրել է Միլի և Մուղանի դաշտավայրերը, որոնք <<յերմանիմ>> են արել թուրքերը (տեղն իմն է): Հայրենական սրբությունները կորցրած հայը տաղեր է հորինել, որոնցում արտահայտել է իր վիշտն ու կարոտը:

Առանց չոլ սարն հի՞նչ կանին,
Պա առանց սար չոլն հինչ կանին,
Առանց վերթի հարն հինչ կանին…[2]

Միշտ հավատարիմ իր ծանր ճակատագրին՝ արցախցին պարզ ու շիտակ, մարդկային է մնացել, որովհետև <<Աստծու թայ է>>, սուրբ ու մաքուր է.

Հայ ընք
Վայ ընք
Ըստծու թայ ընք:[3]

Բանասաց, բանագետ Լ.Հարությունյանը իր <<Նշխարներ Արցախի բանահյուսության>> 5 գրքերում զետեղել է նյութեր, որոնք կապված են Արցախի ճակատագրի, նրա պատմության, աշխարհագրական դիրքի, ժողովրդի սովորույթների, նրա մշակույթի պատմության հետ:

<<Չար ու անկարեկից է աշխարհը … բայց հայը հավատավոր է: Միևնույնն է, բնության մեջ կան բարի ուժեր, կա առավոտ, արև, կան աստղեր ու ծաղիկներ… Հավատից էլ ծնվում է հույսը: Հայի համար հույսը իրական է, գրեթե շոշափելի: Նա հույսը գավազան դարձրած գնում է իր փշոտ ու անվերջանալի ճանապարհը: Ընդվզում է, արհամարհում չար ուժերին, նրանց պարզելով իր արարչական հանճարը: Հաճախ իր բախտն է սգում իր արյան ու ավերակների մեջ, տանջվելով, տառապելով, փեռեկտված հոգով … բայց միշտ էլ իր էության խորքում փայելով <<հարության հույսը>>[4] ,-գրում է Լ. Հարությունյանը: Բերելով օրինակներ (<<Հային հրցրրին. –Հինչավ ըս ապրում: Ասից՝ -Հույսով>>: <<Հույսը հավատավորեն խափիլ չի>>), բանասացը ընդհանրացնում է, որ հույսը հայի հոգում բարի, գեղեցիկ ու արդար երազներ է ծնում:

[1] Լ. Հարությունյան, <<Նշխարներ Արցախի բանահյուսության>>, Եր. 1991, էջ 5:
[2] Նույն տեղում, էջ 9:
[3] Նույն տեղում, էջ 9:
[4] Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Եր,1991,էջ 8:

Բանահյուսական կտորներում ուշադրության արժանի է այն երևույթը, որ արցախցին անգամ չար ուժերին է փորձում բարիացնել, քանի որ նրանք բոլորն էլ բնության հավասարազոր ծնունդներ են (Արջ ախպեր, կյուլ ախպեր, եկ մինտեղ հաց օտինք):

Թշնամուն լավ ճանաչելով, արցախցին միշտ էլ փորձել է լեզու գտնել նրա հետ, օգնել, տեղ տալ, բայց հանդիպել է անամոթ ու երախտամոռ նրա կեցվածքին: Ահա թե ինչու բազմաթիվ օրինակներում արցախցին զգոն է.

Թողիս ուչ դուշմանդ
Կոքընետ հմբարե[1]

Լ. Հարությունյանի << Նշխարների>> 4-րդ գրքում է զետեղված <<Գառներն ու դևը>> հեքիաթը: Գառնուկները տաքացնում, տեղ են տալիս դևին, որի երախին կուլ են գնում ամլիկ գառները, ճխլտվում նրա սմբակների տակ: << Մյուսները փախչում են դես ու դեն, մի կերպ ազատվում դևից: Դևը տաքուկ տան տեր է դառնում.

Գառնուկներ, ո՞վ է մեղավոր, որ դուք մնացիք դրսում
Խի՞ղճը, բարությու՞նը թե անխոհեմությունը:

<<Քամին տանտեր դարձավ, տանտերը դարձավ քամի>>: Երևի այսպիսի առիթներով են ասվել նաև՝ <<Սրտետ նստիմ, մրուքդ քանդիմ>>, <<Վեննանս տեղ անիմ, տեղդ նեղ անիմ>>, <<Թորքեն վեր տոն տարեր՝ հարթնանն աշկեն կյեշի, տանը գյբին, կյումեն ծիին>> և այլն: Լ. Հարությունյանը ընդհանրացնում է. << Թշնամուն տուն թողնելը, առավել՝ տուն հրավիրելը անհամատեղելի է հետագա գոյության հետ, աղետալի՝ տան ճակատագրի համար: Եղերական դեպքերը կրկնվեցին նաև նոր ժամանակներում, քանզի դրանք մոռացել էինք, էլ ինչ խոսք կարող է լինել խելոք դասեր առնելու մասին>>: Ժողովածուում կան նշխարներ, որոնք ապացուցում են, որ թշնամին միշտ էլ մխրճվել է հայկական գյուղերի արանքը և բազմացել՝ իր թալանչիական, ավազակային նպատակները տարածելով շուրջբոլորը: Բացակայում էր ազգային հավաքական մտածողությունը:

<<Նշխարներ…>>-ի 4-րդ գրքի << Հայը պարզամի՞տ է>> զրույցում բանասացը պատմում է, որ թշնամին հայի ճանապարհին խոր հոր է փորել ու ծածկել ծղոտով: Եվ հայը հայտնվում է հորի մեջ, բայց գերմարդկային ճիգով նա ցատկում, դուրս է գալիս, գտնում ոչ հեռու թաքնված թշնամուն : Հայը բռունցքված հարձակվում է հակառակորդի վրա:

-Հայ, ես քեզ համար չեմ փորել, հավատա, երդվում եմ ալլահով, բիլլահով…

-Հա, դե լավ… ներում եմ:

Վերջակետ է դրվում զայրույթին, խաղաղվում է նա՝ հայը, ամառվա այգաբացի պես[2] :

Ճիշտ է Լ. Հարությունյանը. Հայը իրեն հասկացող լավ հարևան ու մտերիմ ազգ չունեցավ: Մեր հարևանները միշտ էլ << շնաճանճի խայթոցով էին զինված մեր դեմ և նախանձի թույնով: Հայի պաշտպանը հայը պիտի լինի: <<Հայի 5 մատները>> հին զրույցը բռունցքվելու գաղափարն է արտահայտում: <<Գայլից երկյուղ կա՝ բռունցքվել, դժվար է տարին, ժամանակն ահոտ է՝ բռունցքվել, թշնամին հայրենական տան շեմին է՝ բռունցքվել…>>[3]:

Արցախյան ժողովրդական ավանդություններում, հեքիաթներում, երգերում ժողովուրդը խորհրդածում է պատմական ժամանակների մասին: Լ. Հարությունյանը << Ժողովրդական բանհյուսության դասերը>> խորագրի տակ գրում է.

-Թուրք սելջուկների ժամանակներից սկսած, թաթար-մոնղոլների շրջանում և մինչև Մելիք Շահնազար երկրորդ և նրանից հետո, երբ ելուզակները հմայված Հայաստանի բնությամբ ու տեղաբնակների կենցաղային հարստությամբ, տեղ էին փնտրում խարիսխ ձգելու համար, միշտ էլ գտնվեցին իշխանական տներ, մելիքներ, հողատերեր, առանձին անհատներ, որոնց ոչինչ հանիրավի չթվացին հարևանությամբ կամ << մի տան մեջ>> ապրելու նրանց ցանկությունները, ընդառաջեցին նրանց << ոտնատեղ անելու>> և տեր դառնալու հողատարածքների, ճանապարհների… Սա քաղաքական կարճատեսություն էր աշխարհակալական տգիտություն՝ հավասարազոր ազգադավության: Հետագայում բազմացան նրանք՝ շարունակ վերջացող ազգականներով, զինակիցներով, հավատակիցներով, թոռներով, ծոռներով, որոնց առգրավելու

[1] Նույն տեղում, էջ 174:

[2] Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4,Ստ. 2009, էջ 19:

[3] Նույն տեղում, էջ 24:

հարաճուն ախորժակը, թալանչիական, ավազակային բնույթը պատուհասեցին ողջ հայ ժողովրդի լինելիությունը, որպես առնածոր յաթաղան կախվելով նրա աշխարհաշեն ճանապարհին: (էջ 6)
Արցախի բանահյուսության իշխող և առաջատար թեմաներից մեկը բոլոր ժամանակաշրջանների համար մնում է հայրենիքի պաշտպանության թեման, որ իր մարմնավորումն է գտել տարբեր ժանրերի երկերում. արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ մղված հերոսամարտեր, ժողովրդի տեղահանում: Բանահյուսության մեջ առկա են պատերազմի ու խաղաղության, ազատ աշխատանքի թեմաները: Արցախյան պանդխտության երգերը ոչ միայն ողբի, այլև ապրելու համար ըմբոստացած մարդկանց երգեր են, ազգային ու սոցիալական թշնամիների դեմ ուղղված բողոքի ճիչեր : << Երգա ողբը>>(Ու՞ր էրթամ) տխուր երգի մեջ բացահայտվում է հայոց ճակատագիրը.

Հայու ճամփա, հայ ճամփա,
Քարոտ ճամփա, վայ ճամփա,
Գլուխ ու ոտ կտրեցին,
Ես քարերին կուլ էթամ:
Հայու աղբյուր, գուռ աղբյուր,
Ակդ ոսկեջուր աղբյուր,
Քեզ ակունքից լլկեցին,
Հիմա պղտոր ջուր էթամ:[1]

Իսկ շուշեցի հայը վշտոտ երգ է երգում իր դառը ճակատագրի մասին.

Վարդս էրալըն, տեղը փուշ ցանալ,
Հազար տարվա տոնըս ավերըն ըրալ,
Ըրտըսունքաս՝ Քուռ,Արաքսնա վրարալ,
Թարթառը, Կարկառը քրըքար ըն ըլալ,
Պլոկված ըմ, մամային ըմ, հինչ անիմ:
……
Իմ դուշմանս համ օժավա, համ նաշար,
Առռե աստծուն հավասար ըմ, հի՞նչ անիմ:

Ժողովուրդը իր լավատեսությունն է արտահայտում երգի վերջում.

Դարդոտ Հանես, բախտեդ աշկը քոռ ըրա,
Ետանաս ուչ, հինչ վեր անիս՝ սոր ըրա,
Զոռդ շատ ա, հավաք ըրա, տոն ըրա,
Թշնամուն թոխկան քաշի, մշկահոռ ըրա,
Ասիս ուչ թա՝ ես յաշար ըմ, հի՞նչ անիմ:[2]

<< Ետե խելք>> զրույցում Լ. Հարությունյանը նշում է, որ հայն ունի ստույգ եզրահանգումներ կատարելու բացառիկ հատկություն: Մի հատկություն, որին նախանձել է թուրքը (թորքն ասումա՝ հայի ետե խելքը իմը բդար):

<<Քննել անքնինը, գտնել բազում ճանապարհներից ամենաուղիղը, միակ ճշմարտությունների մեջ: Ճակատագրական բոլոր հարցերը, ազգին վերաբերող խնդիրները լուծել առանց շտապելու: Սա է արծարծվող խոսքի իմաստը: Հաճախ հապշտապ կայացած վճիռը կանգնում է առաջին պլանում և հայի անսխալ մտածողությունը մնում է <<7 սարի ետևում>>:

Այժմ, առանձին ադրբեջանցի հորինողներ դարավոր ասույթը ներկայացնում են շրջված ձևով, այնպես, թե, իբր, հայն է ցանկանում ունենալ թուրքի հասուն խելքը,- գրում է Լ. Հարությունյանը: Արցախի բանահյուսական նշխարներում նկատում ենք խորհուրդներ, որոնցով ժողովուրդը, իր դարավոր փորձից ելնելով, խրատում է սերունդներին: Այսպես. Թե ատելություն ունես՝ ոսոխին ատիր, թե բարություն ունես, բաժանիր քո ժողովրդին, թե մի բուռ աղանձ ունես, հատ-հատ տուր մարդկանց և ասա՝ <<Էսօր աղանձի օր է>> կամ. Բուստանետ բարան պեց չանիս, բաղեդ մղակը պեց չանիս, լուզվետ փական տիր, տոռնդ կապ պահե թորքու առաջ>>:

<<Եթե բարի չես դու, ապա հայ չես: >>

<<Քրքրիր, փնտրիր արմատներդ ու հայ դարձիր: Եվ ունեցիր բարի մարդու զայրույթը, որ, օ՜, անողոք է լինում…Չարի դեմ: >>

[1] Նշխարներ…, գիրք 2,Ստ. 2004, էջ 251:
[2] Նշխարներ…, Եր. 1991. էջ 175:

Եթե ես թուրք լինեի, կանիծեի Աստծուն՝ ինձ ստեղծելու համար: Ես ինձ կանիծեի եթե թուրք ծնված լինեի (թող ինձ ներեն բոլոր անմեղ երեխաները և նրանք, ովքեր ազգությամբ թուրք չեն): Եթե ես թուրք լինեի, կձգտեի թուրք չլինել՝թեկուզ ուշ և ուշացումով:

Հայրենիքը դավողները արժանանում էին <<փրսրվեր թաղել>> անեծքին:

Լ. Հարությունյանի <<Նշխարների…>> 2-րդ գրքում բացատրվում է գյոր սաթմա բառը, որը Արցախի բարբառ է մտել 13-14-րդ դարերում, ունի մի ցուցադրիր, մի ցուցանե, գեղատեսիլ, հիասքանչ, հիանալի գեղեցկություն ունեցող իմաստները:

Գյորսաթման հարկանուն է, եզակի մի տուրք՝ծնված մոնղոլ-թաթարական տիրապետության վայրենի արգանդից:

Բանահյուսական նշխարները վկայում են, որ հայ գեղոցկուհիները դյուրությամբ չեն տրվել գիշատիչներին, ոչ միայն ծնողները կամ հարազատները, այլև անձամբ իրենք ընդվզել են մոնղոլ-թաթար բարբարոսության դեմ: Ահա Թութին՝ Գոնչու իշխանուհու աղջիկը: Նա իր շուրջն է համախմբել Բերդաշենի, Աշանի և շրջակա գյուղերի գեղեցկուհիներին ու նրանց երկրպագու երիտասարդներին, գունդ է կազմել նրանցից, վարժել, զինել և հանկարծակիի բերելով՝ ջախջախել բոլոր մոնղոլ հարկահաններին և նրանց հետ շրջող զինյալներին, ամրացել բերդի գագաթին և ամիսներ շարունակ անառիկ պահել տասնյակ գյուղեր մոնղոլ հարկահաններից: Թութին որպես աստված պաշտվել է հայ բնակչության կողմից: Նրա անվան շուրջ լեգենդներ են հյուսվել: Նրա անունով է կոչվել Անանց բերդը՝ Աղջկա բերդ (Կըզկալա), մի աղբյուր Բերդաշենի գոմերում (Թութին աղբյուր), մի լիճ և մի աղբյուր էլ Վերին Աշանում՝ Թութու կում: Այսպես՝ անմահացել է հայրենասեր ու վրիժառու աղջկա սուրբ հիշատակը:

<<Պատկերներ Արցախյան շարժման օրերից>> բաժնում Լ. Հարությունյանը գրի է առել նոր բանահյուսական նմուշներ, որոնք վկայում են դարաբաղցու կամքը, ազատության տենչը, վերադարձի կանչը, զոհված մարտիկների հանդեպ սերը, հայի արդար հոգին, հայ մարդու բարոյական մաքրությունը:

Արցախյան օրերից գրառած սրտառուչ պատմություն է <<Մելոն (Աշան)>>. Հիվանդ թրքուհին ծանր վիճակում էր: Ողջ գյուղը տեսության է գալիս նրան: Աշխարն էր հիվանդ, իսկ փոքրիկ լեռնային գյուղը աշխարհից դուրս չէր: Մելոն թրքուհի է, հարս եկած հայի տուն: Ու հայը՝ մարդասեր, կարեկից մինչև վերջին շունչը խնամում, օգնում է նրան:

Եվ ահա արցախյան խրատների մեջ կարդում ենք. Եթե բարի չես դու, ապա հայ չես: >>

Լ. Հարությունյանը վկայում է որ, հայոց պատմության ու ճակատագրի մեջ նվիրական է Անդրանիկի անունը:

Պատմական Աղվանից աշխարհի ողջ տարածքի վրա, որտեղ ապրում էր մի հայ, այնտեղ էլ, որպես հայի անկեղծ ոգու բարձր արտահայտություն, թևածում էր հիացմունքի, հպարտության աղբյուր Անդրանիկի անունը:

Արցախյան բանահյուսական գոհարները վկայում են, որ մեր պատմությունը լի է ցավոտ էջերով: Իսկ մեր մի փոքրիկ հողի վրա միշտ աչք է տնկել ոսոխը, որոնց մեջ առավել շատ մեկի նկատմամբ է, որ ատելություն ու թշնամանք է դրսևորել, որովհետև նրա << սրտին նստող ու մորուքը փետողն է եղել>>:

Հայոց ճակատագիրը հուշում է, որ հողը չպետք է կորցնել, նրա կորստին հետևում են նյութական ու ոգեղեն կորուստները, մշակույթը, սովորությունները: Պատահական չեն ժողովրդական բանահյուսության մեջ պահպանվող և այսօր էլ արդիական հնչողություն ունեցող օրհնանքներն ու մաղթանքները:

Հակառակ հայի մարդասիրության, թուրքը ունի իր դաժան ու անմարդկային օրենքները:

Լ. Հարությունյանը 1979թ. գրի է առել Նոր-շենի ֆերմայում աշխատող Ալայոզ անունով թրքուհու պատմածը.

-Մեզ մոտ սովորություն է, երբ երեխան փոքր ինչ մեծանում է, մենք՝ թուրք մայրերս , նրան ասում ենք .<<Շուտ մեծանաս, գնաս հայ սպանես, որ աշխարհում տուն ու հարստություն ունենաս>>:[1]

Հայի տունը թուրքի համար է կառուցվում, հայի գորգը թուրքի համար գործվում, հայի ոսկին թուրքի համար է, հայ աղջիկը թուրքի կամ կինը պետք է դառնա, կամ ղարավաշը : Եվ երբ դառնում է 10-15 տարեկան, մենք նրա ափի մեջ ենք դնում սուրը և ասում. <<Դե գնա հային սպանիր>>:

[1] Նշխարներ…, գիրք 3,Ստ. 2007, էջ 53:

Իսկ Իսմաիլի շրջանից գրի առած մի զրույցում պատմվում է Աղվանից աշխարհի մի հայահոծ ու հնավանդ երկրամասի հայության կարծիքը, նրանց լսած պատմությունները հայերի ու թուրքերի հարաբերության մասին:

<<Թուրքին ինչ ուշունց ուզում ես տուր, միայն չասես՝ ամոթ քեզ, - պատմում է Արփենիկը: Նա վիրավորվում է, որովհետև ամոթ չունի: Իսկ աներեսության հերթում առաջինն է եղել:

- Թուրքին, որ ասում ես կյող ես, ուրախանումա, թուրքին, որ ասում ես ավազակ ես կամ մարդասպան, ուրախանումա, թուրքին որ ասում ես քոնն է, աշխհարքով մինա լինում… թուրքին որ ասացիր քոնը չէ, իմն է, վառոդդ չոր պահիր, էս աշխարհում կամ դու պետք է լինես կամ ինքը : Նա կկռվի քեզ հետ մինչև արյան վերջին կաթիլը, այն էլ նամարդավարի:

Սա մեր երկրամասի հայերի կտակն է հայ աշխարհին:[1]>>

Հազար ցավ ու դարդ տեսած արցախցին իր հորովելում սթափության է կոչում ժողովրդին, որովհետև միշտ էլ շրջապատված է եղել անողոք հարևանով, որը աչք է տնկել իր ապրուստին, տուն ու տեղին:

Թարթառ, աշկդ պաց արա,
Տափդ վարե հաց արա,
Մին ծերքավ էլ դամադ սրե
Ալուն ծոցը լաց արա:
Ցրիլ մի ցավք ու ալիք
Տառնալ մի տու խաղալիք
Ծերք մեկնե Արաքս, Քուռին
Հալածիր թուրք ու չարիք:[12]

Ծանոթագրություններ

[1] Լ. Հարությունյան, <<Նշխարներ Արցախի բանահյուսության>>, Եր. 1991, էջ 5:
[2] Նույն տեղում, էջ 9:
[3] Նույն տեղում, էջ 9:
[4] Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, էր,1991,էջ 8:
[5] Նույն տեղում, էջ 174:
[6] Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4,Ստ. 2009, էջ 19:
[7] Նույն տեղում, էջ 24:
[8] Նշխարներ…, գիրք 2,Ստ. 2004, էջ 251:
[9] Նշխարներ…, Եր. 1991. էջ 175:
[10] Նշխարներ…, գիրք 3,Ստ. 2007, էջ 53:
[11] Նշխարներ… գիրք 3, Ստ. 2007, էջ 109
[12] Նույն տեղում, էջ 5

[1]Նշխարներ... գիրք 3, Ստ. 2007, էջ 109